

ՀԱՆՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

Էջեր XIX ԴԱՐԻ 50—60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Հարություն Տետեյանի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Կ. Ա. ՃԻՆԳՈՋՅԱՆ

Անցյալ դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական-գրական կյանքի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի նաև զմյուռնահայ գրական շարժումը, որի առաջատար ներկայացուցիչներն էին Տետեյան հղբայրները, Գ. Զիլինկիրյանը, Ա. Հալկունին, Մ. Մամուրյանը, Գ. Կոստանդյանը, Մ. Նուպարյանը, Գ. Մսերյանը և ուրիշներ։ Տետեյան հղբայրները հայտնի էին առավելապես իբրև հայ գրատպության անխոնջ մշակներ։ 1850-ական թթ. սկզբներին նրանց հիմնադրած տպարանի շուրջ քառասունամյա արդյունավետ դործունեությունը մնում է որպես հայ մշակույթի պատմության նշանակալի օղակներից մեկը։

Տետեյան հղբայրները, սակայն, տպագրական-հրատարակչական աշխատանքներին լուզված ծավալել են նաև թարգմանչական բեղուն դործունեություն, որը, բացառությամբ Հարություն Տետեյանի մասին Մ. Նուպարյանի հոդվածի և Կարապետ Տետեյանի մասին Լեոյի համառոտ տեղեկության, երկար ժամանակ առանձին ուշադրության չի արժանացել։ Վերջին տասնամյակներում հայ թատրոնի պատմությանը նվիրված մի շարք ուսումնասիրություններում¹ փորձ արվեց վեր հանելու Կարապետ Տետեյանի ներդրած ավանդը ինչպես հայոց շեքսպիրյան անդրանիկ թարգմանությունների, այնպես էլ հայ շեքսպիրագիտության պատմության մեջ։ Բնական է, որ նյութի որոշակիության թելադրանքով նրանց հետաքրքրության շրջանակներից դուրս է մնացել մյուս Տետեյանների գրական վաստակը։ Ժամանակն է ի մի բերելու Տետեյան հղբայրների դեղարվեստական ժառանգության քիչ թե շատ ամբողջական նրկարագիրը և որոշելու նրա տեղն ու նշանակությունը անցյալ դարի երկրորդ կեսի հայ նոր գրականության, ինչպես նաև հայ-եվրոպական գրական տոնչությունների վարձագման պատմության մեջ։

Հայ պատմաբանասիրության մեջ Տետեյան տպարանի հիմնադրման կապակցությամբ առհասարակ հիշատակվել են Հարություն, Կարապետ և Սարգիս Տետեյանների անունները²։ Մեր պրպտումները, սակայն, հանգեցրին այն հետևության, որ Տետեյան հղբայրները ոչ թե երեքն են, այլ հինգը, որոնք մամուլում թե ալուր հանդես են եկել նաև իրենց Հովհաննես հայրանունով (Յովհ.,

1 Մ. Նուպարյան. Տիգրան Հարություն Տետեյան. «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1901, № 1, 3—5; Լեո. Շեքսպիրը հայերի մոտ. «Հորիզոն», Թիֆլիս, 1916, № 101:

2 Վ. Թևրդիբաշյան. Շեքսպիրը հայերեն. Երևան, 1956: Լ. Սամվելյան. Շեքսպիրը և հայ գրական թատերական մշակույթը. Երևան, 1974:

3 Տե՛ս Մ. Նուպարյան, նշվ. աշխ.: Թեոդիկ. Տիպոտառ. Կ. Պոլիս, 1912, էջ 136: Վ. Զարգարյան. Հիշատակարան. Կ. Գ. Գահիրե, 1934, էջ 5: Մ. Շտիկյան. Հայ նոր գրականության ժամանակագրություն. Երևան, 1973, էջ 185: Մ. Ն. Հակոբյան. «Մետեորա» հանդեսը արևմտահայ դեմոկրատական շարժման մեջ. Երևան, 1977, էջ 20 և այլուր:

Յով., Յ., կամ 0.—0 հանգստ հապավումներով)⁴։ Հետևաբար վերոհիշյալներին պետք է ավելացնել նաև Ստեփան և Հակոբ Տեոեյանների անունները, որոնք նույնպես սերտ աղերս ունեն Տեոեյան տպարանի հիմնարար ձեռնարկումների և նրա հետագա գործունեության հետ։

Տեոեյանները Զմյուռնիայի հայ անվանի գերդաստաններից էին։ Նրանք առևտրական տներ ունեին Զմյուռնիայում, Կ. Պոլսում, Փարիզում և այլուր։ 1850-ական թթ. այդ տների գործերը վարում էին Տեոեյանների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները։ Առևտրական գործարքներին զուգահեռ Տեոեյան եղբայրները զբաղվել են նաև հասարակական-գրական-հրատարակչական գործունեությամբ։ Բոլորն էլ Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի սաներ, տիրապետել են օտար լեզուների, գործերի բերումով շրջագայել են եվրոպական երկրներում։ Գործուն մասնակցություն են բերել համայնքի հասարակական, կրթական և մշակութային կյանքին, հիմնադրել են տպարան, հրատարակել են թերթեր, ամսագրեր, դասագրքեր, աշխուտակցել են ժամանակի արևմտահայ մի շարք պարբերականների, եղել են Զմյուռնիայի «Հաշտենից» հայրենասիրական միության և «Վասպուրական» թատերական ընկերության հիմնադիր անդամներ, իսկ եղբայրներից ումանք մասնակցել են «Տիգրան» մասոնական ընկերության ժողովներին⁵։

Զմյուռնահայ գրական շարժման անդրանիկ մտորումները սաղմնավորվել են Մեսրոպյան վարժարանում՝ գրասեր աշակերտության աշխույժ շրջանում։ Շնորհիվ Զմյուռնահայ անվանի մանկավարժներ Հ. Վանանդեցու, Ա. Փափագյանի, լուսամիտ հոգաբարձուներ Ստ. Պալասանյանի, Հովհ. Նուպարյանի, Գր. Կոստանդյանի, Ստ. Տեոեյանի, ինչպես նաև առաջադեմ տեսուչներ Մ. Մամուրյանի և Ս. Ոսկանյանի գործադրած ջանքերի՝ կրթական-լուսավորական այս օջախում ստեղծվել է աղգային-հայրենասիրական տրամադրությունների խանդավառ մթնոլորտ, որը և նպաստել է գրական շարժման եռանդուն գործիչների մի նոր սերնդի երևան գալուն։

Ազգային զգացմունքների վերազարթոնքի շրջան էր այդ, երբ դեռ աշակերտական նստարանից Մեսրոպյանի սաներն ապրում էին ապագայի վեհ ու ազնիվ ծրագրումներով։ Նրանց ուժանտիկ պատրանքներին թև ու թևիչք էին տալիս ոչ միայն ազգային զարթոնքին ու լուսավորությանը սատարելու հայրենասիրական մղումները, այլև Արևմուտքից ներթափանցող ազատամտական գաղափարները։ Մեսրոպյան վարժարանի տեսուչ Ա. Փափագյանը իր գրասեր սաներին ոգևորում էր հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագներով և հորդորում նրանց՝ իբրև բանաստեղծական հավելյալ անուն կրել հայ դյուցազունների ոգեշունչ անուններ⁶։ Իրավամբ Մեսրոպյան վարժարանի գրասեր պատանիները իրենց զրական տնդրանիկ ելույթների տակ ստորագրել են՝ Հայկ Ստեփան Ոսկանյան, Արամ Կարապետ Տեոեյան, Հայկ Գալուստ Կոստանդյան, Տիգրան Հայրապետ Սավալանյան և այլն։ Ինքը տեսուչը կրել է Ռուբեն գրական անունը⁷։

Բանաստեղծ և լուսավորիչ Հ. Վանանդեցուց հետո առավելապես Ա. Փափագյանի հայրենասիրական հորդորների արդյունքը պետք է համարել նաև Զմյուռնահայ գրական շարժման աշխուժացումը։ Հետևելով նրա անձնական օրինակին ու խրախույսներին, մեսրոպյան սաները սկսում են առանձին հետաքրքրություն ցուցաբերել տպագրական, հրատարակչական և գրական-թարգմանչական գործունեության նկատմամբ, պատանեկտն խանդավառությամբ անելով իրենց առաջին գործնական քայլերը։ Պատահական չէ, որ

⁴ Տե՛ս «Արշալույս Արարատյան». Զմյուռնիա, 1851, № 393, 1852, № 408, 1862, № 850, 1871, № 904։ «Նույն աղալնի». Զմյուռնիա, 1852, №№ 8—43։ «Բազմավեպ». Վենետիկ, 1867, նոյեմբեր, էջ 343—344։ «Մասիս» (փոքրադիր). Կ. Պոլիս, 1866, № 82 և այլուր։

⁵ «Արևելյան մամուլ». Զմյուռնիա, 1875, № 5, էջ 155։

⁶ Մեսրոպ Նուպար. Հին իզմիրցի հայերը ու անոնց փառքը (տե՛ս Ս. Պարթևյան. Զմյուռնահայ տարեցույց. Իզմիր, 1920, էջ 17—18)։

⁷ Նույն տեղում, էջ 18։

1850—60-ական թթ. Ջմյուռնիայում լույս տեսնող պարբերականների և գրականության գերակշիռ մասի պատմությունը սելտորեն աղեքսվում է միսրոպյան սաների անվան հետ:

Աղղանվեր ոգորումների այս շրջանում էր, որ Տետեյան եղբայրները հիմնադրում են իրենց տպարանը, որը շուտով պետք է դառնար ոչ միայն արևմտահայ իրականության մեջ առաջնակարգ տպարաններից մեկը, այլև զմյուռնահայ գրական շարժման հիմնարար օջախը:

Տետեյան եղբայրները բոլորը չէ, որ օժտված էին գրական ընդունակություններով: Ստեփանն ու Սարգիսը ի սկզբանե աջակցել են տպարանի նյութական կարիքներին, այնուհետև զբաղվել իրենց հրատարակչությամբ լույս տեսնող գրականության առաջնական գործերով: Հարություն, Կարապետ և Հակոբ Տետեյանները դեռ աշակերտական տարիներից աչքի են ընկել գրական նախասիրություններով: Պատահական չէ, որ երեքն էլ կրել են հավելյալ բանաստեղծական անուններ և իրենց գրական աշխատասիրությունների տակ ստորագրել՝ Տիգրան, Հարություն Տետեյան, Արամ Կարապետ Տետեյան, Հայկ Հակոբ Տետեյան:

Տետեյան եղբայրների գրական նախասիրություններն ու հասարական, քաղաքացիական կողմնորոշումներն առավել որոշակի են դառնում, երբ 1853-ին սկսում են հրատարակել իրենց «Արփի Արարատյան» ամսագիրը: Գրական բնույթի այս հանդեսում տպագրված շահեկան նյութերը, և հատկապես համաշխարհային գրականությունից կատարված հատընտիր թարգմանությունները Տետեյաններին լայն ճանաչում են բերում: Ջմյուռնիայում լույս տեսնող պարբերականների և գրականության մեծ մասը կրում էր Տետեյան տպարանի մականիշը: Այստեղ էին տպագրվում ոչ միայն Տետեյանների աշխատասիրությունները, այլև զմյուռնահայ առաջադեմ գործիչներ Գ. Կոստանդյանի, Գ. Ջիլինկիրյանի, Ա. Հակոբյանի, Մ. Մամուրյանի, Ս. Վանանդեցու, Մ. Նուպարյանի, Գ. Մսիրյանի և այլոց թերթերն ու ամսագրերը, ինքնուրույն ու թարգմանական երկերը:

Այս տարիներին Ջմյուռնիայի Հայոց թաղում հաստատված Տետեյանների տպարանը վերածվում է յուրատեսական գրական-լուսավորական օջախի, որտեղ գործերի բերումով ելումուտ էին անում ժամանակի հասարակական գործիչները, գրողներն ու հրապարակախոսները: Բնական է, գաղափարական մարդկանց այս աշխույժ մթնոլորտում արժարժվում էին ազգային կյանքի առաջընթացին սատարող կենսական խնդիրներ, հղանում լուսավորական, հայրենասիրական գործունեության ծրագրեր: Զգալով իրենց ազգանվեր նրպատակների ընդհանրությունը, զմյուռնահայ առաջադեմ գործիչները հետըհետե համախմբվում են Տետեյան տպարանի շուրջը: Եվ չնայած իրենց զբաղմունքներին-ստեղծագործական ուրույն խառնվածքին ու գաղափարական կողմնորոշումներին, զմյուռնահայ գրական շարժման այս առաջամարտիկները համախուհ ու միասնական էին ժողովրդի լայն խավերի լուսավորության, լեզվի ու գրականության աշխարհականացման, եվրոպական ազատամտական գաղափարների տարածման ու պրոպագանդան գործում:

Դրական շարժումները, կամ նրանց առանձին հոսանքները խմորվում, ձևավորվում են հասարակական և դեղադիտական տարբեր ըմբռնումների պայքարի մթնոլորտում և արտահայտում հասարակության այս կամ այն խավի սոցիալ-պատմական ու հոգեոր ձգտումները: Ջմյուռնահայ գրական շարժումը հիմնականում հենված էր աշխատավորական լայն զանգվածների վրա և արտահայտում էր դեմոկրատական շրջանների իդեներն ու ոգորումները: Սկիզբ առնելով Ջմյուռնիայի կրթական-լուսավորական օջախներում, մտավոր այդ շարժումը հետզհետե հզորանում, հասարակական-քաղաքական ազդակի ուժ է ձեռք բերում հետադիմության դեմ մղվող պայքարում:

Անդրադառնալով այդ տարիների զմյուռնահայ մտավոր շարժման գաղափարական խմորումներին, Վրթանես Փափագյանը գրում է. «Մեկ կողմեն սպառնալից գիրք բռնած էին հինի ներկայացուցիչները՝ անսահման իշխանության ձգտող ամիրայությունն ու Պատրիարքարանը, կրոնավորությունը,

գրաբարը և ամբողջ պատմական անցյալը, իսկ մյուս կողմեն խիզախ շարժումներով և հանդուգն քայլերով ասպարեզ նետված էր Արևմտականության հարած երիտասարդությունը: Այս վերջինը դեռ զորավոր կովան շուներ թեև, բայց իր կողմն ուներ մեծ ապագան, ուներ Եվրոպայեն եկած և Մեծ հեղափոխության շունչովը սնած, մսեմ գաղափարներով լի եռանդուն մարտնչողներ, ինչպես և շարունակ դեպի առաջ ձգտող մտավոր շարժման եռանդը»⁸:

Հայ ընթերցողին ժամանակի մտավոր հեղաբեկումներին նախապատրաստելու նպատակով զմյուռնահայ գրական խմբակցության ներկայացուցիչները, այդ թվում նաև Տետեյան եղբայրները, իրենց հրապարակախոսական ու գրական ինքնությունը գրովածքներից բացի լայն ձևակառույցով գիմեցին նաև համաշխարհային զբաղանդության դասական երկերի հայացմանը: Եվրոպական գրողների գլուխգործոց երկերի աշխարհաբար թարգմանություններով ընթերցասիրտության նոր ճաշակ պատվաստեցին գրական հասարակայնության մեջ, մեծապես ընդլայնեցին նրա ավանդական ըմբռնումները աշխարհի և համամարդկային գեղարվեստական մոտածողության վերաբերյալ: Զմյուռնահայ գրական-թարգմանչական շարժումն ունեցավ շուրջ կեսդարյա պատմություն: Սկիզբ առնելով անցյալ դարակեսի եվրոպական հեղափոխական իրադարձությունների ազդեցությամբ, Ազգային սահմանադրության և Զեյթունի ապստամբության համազգային ոգևորության տարիներին ապրեց իր ծաղկման ու վերելքի շրջանը: Համիդյան ազգային-քաղաքական ճնշումների ուժեղացման հետևանքով այդ շարժումը հետզհետե սկսեց անկում ապրել, դարավերջին հանգեցրել իր մայրամուտին: Մատենագիտական տվյալների համաձայն Տետեյան տպարանը այս տարիներին լույս է ընծայել տարբեր հեղինակների ավելի քան 200 հատոր գրականություն: Գրապատմական նշանակության տեսակետից, ստեղծելով արժեքավորը 1850—60-ական թթ. հրատարակված գրականությունն է, քանզի այդ տարիներին Տետեյան տպարանի շուրջ համախմբված գրական խմբակցությունը եղել է առավել կուռ ու միասնական, գործել է հայրենասիրական մեծ ներշնչանքով ու նպատակամղվածությամբ: Տետեյան տպարանում հրատարակված գրականության գեղակշիռ մասը հիմնականում արևմտաեվրոպական գրողների դասական երկեր են, որոնց հայացման շնորհակալ գործում իրենց ավանդն ունեն նաև Տետեյան եղբայրները:

Դեռ Մեսրոպյան վարժարանի սաներ, նրանք տպարան հիմնադրելու գործնական ձեռնարկումներին զուգահեռ ներգրավվում են զմյուռնահայ գրական շարժման յուրորդ: 1850-ական թթ. Զմյուռնիայում և այլուր լույս տեսնող հատուկենտ պարբերականներում Ս. Ոսկանյանի, Գ. Զիլինկիրյանի, Ս. Նուպարյանի, Մ. Մամուրյանի և այլ անունների կողքին երևում են նաև «Հ.Յ.Տ.» (Հայկ Հակոբ Տետեյան), «Ա.Կ.Տ.» (Արամ Կարապետ Տետեյան) և «Տ.Յ.Տ.» (Տիգրան Հարություն Տետեյան) ստորագրությունները:

Ինչպես արևմտահայ դեմոկրատ լուսավորիչները, այնպես էլ Տետեյան եղբայրները, իրենց գրական երախալքներովն իսկ հանդես են եկել որպես արևմտահայ աշխարհաբարի և նորոգ շնչով տոգորված աշխարհիկ դրականության զարգացմանը սատարողներ: Նրանց թարգմանական առաջին փորձերը զավեշտական պատմություններ են, բարոյալից սոսկաներ, զվարճալի մանրապատումներ: Վերոհիշյալ պարբերականների գեղարվեստական բաժինները զարդարող այս նյութերը, թեև անվարժ գրչի արգուսիքներ, աչքի են ընկնում ժամանակի ոգու կենդանի զգացողությամբ և արձագանքում լուսավորական շարժման առաջատար խնդիրներին:

Գնալով Տետեյան եղբայրների հասարակական հայացքներն ավելի ու ավելի ցայտուն են դրսևորվում: 1852-ին «Արշալույս Արարատյանի» էջերում պարբերաբար տպագրվում է Ա. Կ. Տետեյանի՝ Փրանսիական «Վա պրես» լրագրից քաղված հոդվածաշարը⁹: Ըստ էության դա ֆրանսիացի պատմաբան Իլենոր Գալուայի «Հերետիկոսության պատմությունը» նշանավոր գրքի հա-

⁸ Վ. Թ. Փափազյան. Պատմություն հայ գրականության. Կ. Պոլիս, 1914, էջ 11:

⁹ «Արշալույս Արարատյան». Զմյուռնիա, 1852, №№ 425—429:

մառնող շարադրանքն է, որտեղ պատկերված են միջնադարյան կաթոլիկ ինկվիզիտորների անմարդկային ոճիրները: Միաժամանակ արևմտահայ մի շարք պարբերականներում լույս են տեսնում Հակոբ և Կարապետ Տետեյանների ալլաբանական «Հանելուկներն» ու նրանց «Լուծումները», որոնց խաչթող սլաքներն ուղղված էին կաթոլիկ Հասունյանի գործունեության դեմ:

Տետեյան եղբայրների գրական նախասիրությունները, ինչպես ասացինք, առավել որոշակի են դառնում, երբ 1853-ին նրանք սկսում են հրատարակել «Արփի Արարատյան» ամսագիրը: Բազմազան են այս պարբերականում տպագրված նյութերը: Ակնհերև է երիտասարդ խմբագիրների լուսավորական, ազդասիրական միտումը. այն է՝ առավել բազմապիսի նյութեր մատուցել ընթերցողներին, ընդարձակել նրանց մտահորիզոնը, նրանց հաղորդակից դարձնել աղյղի հեռավոր անցյալի հերոսական էջերին, գիտության, տարբեր ժողովուրդների կենցաղին ու բարքերին, ինչպես նաև ազդային և համաշխարհային դրական-մշակութային կյանքի կարևոր իրադարձություններին: Այնուհանդերձ, դժուր նախադրական հայ պարբերական մամուլի պատմության մեջ «Արփի Արարատյանը» իր արժանավոր տեղն ունի ոչ այնքան նյութերի հանրագիտական բնույթով, որը բնորոշ էր ժամանակի լուսավորական շարժմանը հարող բոլոր պարբերականներին, որքան այն թարգմանական գեղարվեստական արժեքներով, որոնք նոր էջ պիտի նշանավորեին հայ-եվրոպական դրական առնչությունների պատմության մեջ: Երևույթն ուղադրվ էր նաև դրական այդ արժեքները ընթերցող լայն շրջաններին նորովի մատուցելու, նրանց հետաքրքրությունն ու ընթերցասիրությունը հրահրելու տեսակետից: Հետևելով ժամանակի եվրոպական լրագրության մեջ լայն տարածում գտած սյրակտիկային, Տետեյանները ևս իրենց հայացքած առավել ծավալուն երկերը պարբերաբար հրատարակել են «Արփի Արարատյանի» հավելվածներում:

Հանդեսի յուրաքանչյուր շրջանը բովանդակում է հետո Տետեյանները ամսագրի էջերում հանդես են եկել իրենց կատարած յուրովի հաշվետվությամբ: Խոնարհաբար խնդրելով, որ ընթերցողները ներողամիտ լինեն «Արփիում» տեղ գտած «պակասությունը» համար, Տետեյանները համեստաբար ակնարկել են նաև դրականը. «Այսուամենայնիվ,— գրում են նրանք «Արփիի» երկրորդ շրջանի առաջին համարում,— մեզի ուրախություն է տեսնել, որ միևնույն ժամանակը քանի մը տեսակ գրքեր ազգին կընծայեմք: Հազար ու մեկ գիշերներ, օսմանյան պատմությունը, կատակերգությունները Արփի Արարատյանին մեջ ամփոփվել են ետև՝ կրնա ընթերցողը զանոնք բաժանել ու զատ գրքեր ընել, ինչպես է մեր դիտավորությունը»¹⁰: «Արփիի» ընթերցողները այդպիսի վարվել են: Այդ է պատճառը, որ այս հանդեսի մեզ հասած հավաքածուների մեծ մասում հավելվածները պակասում են, բացառությամբ նրանց, որտեղ տպագրվել է «Օսմանյան պատմությունը»:

Շեքսպիրի և Մոլիերի կատակերգությունները «Արփի Արարատյանում» սուղադրվել են «Խաղարկությունը Վլ. Շեքսպիր» և «Խաղարկությունը Մոլիերի» ընդհանուր խորագրերի տակ: Կարելի է ենթադրել, որ Տետեյանները մշտադիր են եղել իրենց ամսագրի էջերում սկիզբ դնել մի մեծ մատենաշարի, որտեղ ընթերցողի ուղադրությանը ներկայացվեին ոչ միայն Շեքսպիրի և Մոլիերի ստեղծագործությունները, այլև համաշխարհային գրականության այլ մեծ հեղինակների դասական երկերը: 1855-ի վերջերից, սակայն, «Արփիի» հրատարակությունը դադարում է «նյութերի և միջոցների պակասության պատճառով»¹¹: Չնայած դրան, Տետեյանները չեն վհատվում: Նրանք այլ ուղիներով են փորձում իրագործել իրենց ծրագրերը:

«Արփի Արարատյանի» առաջին իսկ համարից սկսում է տպագրվել Շեքսպիրի «Սխալների կոմեդիան»՝ «Կատակերգություն սխալանաց» վերնագրով¹²,

¹⁰ «Արփի Արարատյան». Զմյուռնիա, 1854, Բ տարի, № 1:

¹¹ Հ. Պետրոսյան. Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա. Երևան, 1956, էջ 166:

¹² «Արփի Արարատյանի» այն համարները, որտեղ տպագրված է Շեքսպիրի համանուն կատակերգությունը սկզբից մինչև երրորդ արարվածի երկրորդ տեսիլը, հայտնաբերել է շեքսպիրահ «Հանդես», № 2

Թարգմանությունը կրում է Ա. Կ. Տետեյան» ստորագրությունը: Կատակերգությունը միայն երեք գործողություններն են տպագրվել: Այնուհետև հրատարակությունն ինչ-ինչ պատճառներով ընդհատվել է: Չնայած դրան Արամ Կարապետ Տետեյանի այս թարգմանությունը նշանակալի երևույթ էր: Ա. Կ. Տետեյանն առաջինն էր, որ ելնելով լեզվի ու գրականության ժողովրդայնացման լուսավորական սկզբունքներից՝ մեծ անգլիացու երկը հայացրել է ընթերցող շրջաններին մատչելի գրական արևմտահայերենով: «Մինչ այդ, — ինչպես նկատել են հայ շեքսպիրագետները, — Շեքսպիրից կատարված թարգմանությունները եղել են գրաբար»¹³: Այս երկի թարգմանությամբ հայ իրականության մեջ սկիզբ էր դրվում իսկական, հետևողական շեքսպիրասիրության, քանզի «Սխալների կոմեդիայից» հետո Ա. Կ. Տետեյանի թարգմանությամբ թե՛ մամուլում, թե՛ առանձին գրքով լույս են տեսնում նաև հանճարեղ անգլիացու «Վենետիկի վաճառականը»¹⁴, «Համլետը»¹⁵ (անավարտ), «Ռոմեո և Ջուլիետը»¹⁶: Ա. Կ. Տետեյանը Շեքսպիրից հայացրել է այլ պիեսներ ևս, սակայն: ինչպես ինքն է խոստովանում «Ռոմեո և Ջուլիետի» առաջաբանում՝ «անհաշող բախտ ունեցան», «մինչև հիմա փոշոտած մնացին»¹⁷:

Ա. Կ. Տետեյանի շեքսպիրյան թարգմանությունները սլատահական հրապուրանքի արդյունք չէին: Ձեռնարկելով այդ գործը, Տետեյանը խորապես գիտակցել է, որ ծառանալու է անցյալից ավանդված, բայց դեռ կենսունակ գեղագիտական հայեցողությունների դեմ: Այս շրջանում Շեքսպիրի մասին դեռևս գերիշխում էին Մխիթարյան գործիչների տեսական ըմբռնումները, որոնք ի վերջո հանգում էին վերաբերյալ այն ծայրահեղ հետևություններ, թե Շեքսպիրը թեև «երեւելի», «հանճարեղ» թատերագիր է, սակայն կլասիցիզմի սրբագործված կանոնների իմացության և կիրառության տեսակետից միանգամայն «թափուր է», «բարբարոս»: Մխիթարյան ամենաշրջահայաց բանասերներն իսկ (Մ. Մաղաթ-Թեոփիլյանց, Գ. Զարեհանալյան և ուրիշներ) գտնելով հանդերձ, որ Շեքսպիրը մարդկային ամենաբուռն կրքերի ու արարքների ճշմարիտ, սքանչելի նկարագրող է, չէին մոռանում իրենց դրվատանքները ի վերջո պատկեր մի ուրույն վերապահության, թե «աս իր թատերգությանց մեջ թատերական արվեստին կանոնները պահած չէ, որովհետև ոչ ժամանակի, ոչ տեղի ու ոչ գործողության միություն կա», թե՛ «ողբերգություն մը, գործողություն մը չունի, որ նյութեն տարբեր բաներ մեջը չմտնեն, և կամ կերպով մը վսեմությունը չտկարանա: Ասոնց ամենն ալ կանոնները չգիտնալուն պատճառովն է»¹⁸, և այլն:

Ելնելով ժամանակի հայ լուսավորական գեղագիտության պահանջներից՝ Ա. Կ. Տետեյանը իր շեքսպիրյան թարգմանություններին կցել է մեծ անգլիացու կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող հավելյալ նյութեր, թարգմանական թե ինքնուրույն, որոնք, ինչպես նշել է Լեոն, «հաճելի և գեղեցիկ նորություններ էին հայոց գրականության մեջ»¹⁹: Լեոն ակնարկում էր այն թարգմանությունը, որ ներբերում էր Տետեյանը մինչ այդ Շեքսպիրի մասին տիրապետող հասկացողությունների մեջ: Հակադրվելով պահպանողական հայեցողու-

րագետ Լ. Սամվելյանը Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան դրադարանում: Տե՛ս «Գարուն». Երևան, 1976, № 8:

13 Վ. Թեոփիլյան. Շեքսպիրը հայերեն. Երևան, 1956, էջ 38: Լ. Սամվելյան. Հայ շեքսպիրագիտության սլատմությունից. «Սովետական արվեստ», Երևան, 1964, էջ 14:

14 «Համլետահարս». Զմյուռնիա, 1862, №№ 1—12:

15 «Դիմակ». Զմյուռնիա, 1862, №№ 1—7:

16 «Վլ. Շեքսպիրյան խաղարկությունը, Հոմեդու և Ճիվեդդա, ողբերգություն ի հինգ արարածս Սթիվենի, Մալոնի և Ս. Ճոնսոնի օրինակաց դէմընդդիմալ բնագրէ, թարգմանուած յԱ. Կ. Տետեյանէ». Զմյուռնիա, տպագրութիւն Տէրէեան, 1866:

17 Նույն տեղում, էջ Ի:

18 «Գուլիելմոս Շեքսպիր». «Բաղմավես», 1853, № 6, էջ 84:

19 Լ. Ե. Շեքսպիրը հայերի մոտ. «Հորիզոն», Թիֆլիս, 1916, № 101:

թյուններին, ղմյունահայ գրական մշակը Շեքսպիրին ընդունեց անվերապահորեն, այդ հարցում կանգնելով ժամանակի անվանի շեքսպիրագետների և մասնավորապես Ֆրանսիայի մեծ ուսմանտիկներ Հյուգոյի, Դյումայի և այլոց դիրքերում:

«Ռոմեն և Զուլիետի» առաջաբանում հանդիպում ենք ժամանակի առումով բավականին հանդուգն մի արտահայտության. «Ինչ որ է Սուրբ գիրքը բարեպաշտ քրիստոնեի մը համար, նույնն է Շեքսպիրի գործերը ճաշակատեր մարդու մը համար, վասնզի ամենափոքր շահագուտ ներկայացնող առարկա մ'իսկ չգտնվիր, որ այս հեղինակին գրությանց մեջ նկարագրությամբ երևելի հանդիսացած չլլա, որու հանճարին մեջ մարդկային բնության թե՛ ամենափանթ և թե՛ ամենաստորին ստվերներու բոլոր զանազանությանց և նորաձևությանց փայլելը կերևի»²⁰:

Մինչ այդ քրիստոնեական բարոյագիտության նորմերով սնված հայ ընթերցողին Տեսեյանը, թեկուզ և թարգմանաբար, հրամցնում էր հումանիզմի, տնկաշկանդ սիրո, ալատասիրության ու արդարամտության վեհ ու ազնիվ դադափարների շեքսպիրյան հավատամբը: Նա համարձակորեն ծառանում էր սուղային հողի վրա արմատացած այն ուղղափառ հայեցողությունների դեմ, որոնք շարունակում էին անտեսել շեքսպիրյան հանճարի փայլատակունները, անգիտանում մարդկային «ամենավեհ ու ամենաստորին» արարքների համապարփակ ընդգրկումների անհրաժեշտությունը, մի խոսքով ժխտում այն, ինչ կոչվում էր ստեղծագործական երևակալության թռիչք և ազատություն: Շեքսպիրի հայ թարգմանիչը ևս գտնում է, որ թատերական երկից ստացված տպավորությունը պետք է լինի «բարեխառն», ուստի միևնույն թատերգության մեջ կարող են համատեղվել ողբերգականն ու կոմիկականը, բանաստեղծականն ու պրոզայիկը, միայն թե այդ ամենը հնչի «պատշաճահարմար ներդաշնակությամբ և ամենապարզ բնականությամբ», այսինքն այնպես, ինչպես մեծ թատերագրի կերպերում:

Բնական է, շեքսպիրյան ռեալիստական արվեստի մի քանի առանձնահատկությունների կռահումը դեռ չէր նշանակում, թե Ա. Կ. Տեսեյանը որոշակիորեն կանգնած էր մեծ թատերագրի գեղագիտական սկզբունքների ըմբռնման ուղու վրա: Համոզվիչ է հայ շեքսպիրագետի այն հետևությունը, որ Տեսեյանը, որպես լուսավորական ծրագրումներով տոգորված գործիչ, Շեքսպիրի երկերը թարգմանել է առաջին հերթին «կարեկրելով դրամատուրգի հոգևորական-բարոյադիտական ուժը, բայց նրա արվեստը գնահատելիս առաջնորդվել է ուսմանտիկական գեղագիտության ռահվիրաների ելակետից»²¹, Ա. Կ. Տեսեյանի կարծիքով Շեքսպիրի դրամաները գրված են «հաղագս գանազան կրից և մոլությանց», ուստի և նրա կազմած յուրատեսակ աղյուսակում մեծ անգլիացու երկերն ու կերպարները համակարգված են ըստ նրանցում խտացված բարոյագիտական որևէ թեզի: Ա. Կ. Տեսեյանը Շեքսպիրի հերոսներին ընկալում է որպես մեկընդմիջտ տրված անխառն բնավորություններ, հետևելով բարոյահոգեբանական այն անցումներն ու վերափոխումները, որ ապրում են այդ կերպարները պատմական իրադարձությունների և կամ կենսական միջավայրի չափեցությամբ:

Շեքսպիրի հայ թարգմանչի որոշակի միտումով ընտրված երկերն ու հավելյալ նյութերն իրենց մեջ պարունակում են նաև առկա իրականության հանդեպ ընդդիմադիր տրամադրություններ: Ա. Կ. Տեսեյանը խորապես զգում էր այն ներքին, հոգևոր աղետը, որ կար հանճարեղ անգլիացու երկերի և հայ հասարակական-գրական մտքի ոգորումների միջև: Ավատական կացությամբ փոխանցված նախապաշարմունքներ, դասային և ազգային պատնեշներ, կրոնական խտրականություն, «նաղդ փողի» հոգեբանություն..., երևելիքներ,

²⁰ «Հոռմէոս և Զիւլէէդա...», էջ Դ.:

²¹ Լ. Ս ա մ վ ե լ յ ա ն. Շեքսպիրը և հայ գրական ու թատերական մշակույթը. Երևան, 1974, էջ 80:

բրոնք իրենց հրատապ արժարժումներն ունեին նաև ժամանակի հայ նորագույն գրականության մեջ և թատրոնում:

Գյոթեն մի առիթով ասել է. «Շեքսպիրը դարձել է մի շափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար. եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»²²: Շեքսպիրի հայ թարգմանիչը ևս սրբազան դոկտոր է մոտեցել մեծ անգլիացու երկերին, կանխազգացել այն դժվարությունները, որ ծառանալու էին հոգևոր այդ արժեքները հայացնելիս: Պիտի կաշոռանա՞ր արդյոք հալոց նորընծա աշխարհաբարը լիարժեք միջնորդ դառնալ հանճարեղ գրողի և հայ ընթերցողի միջև, առանց խաթարելու շեքսպիրյան բարձրարժեք երկերի գեղարվեստական կատարելությունը: Տեղեկանի խոստովանությամբ՝ կորուստներն անխուսափելի էին: «Սխալների կոմեդիայի» թարգմանության առիթով նա հայտնում է, որ անասելի դժվարությունների է հանդիպել, որի հետևանքով Շեքսպիրի կատակերգությունը կորցրել է «իր անուշիկության մեծագույն մասը»: «Ռոմեո և Ջուլիետը» թարգմանելիս Ա. Կ. Տեղեկյանը նորից ընթերցողի ներողամտությունն է հայտնափոխում՝ իր «տկար գրող» այդ սքանչելի երկի «քաղցրության համեմը նվազեցնուցած ըլլալուն համար»: Չնայած դրան նա ջանք չի խնայել ըստ իր «կարյացը» և նորընծա գրական աշխարհաբարի ընձեռած հնարավորությունների հավատարիմ մնալու շեքսպիրյան երկերի ոգուն ու բովանդակությանը:

Ա. Կ. Տեղեկյանի շեքսպիրյան թարգմանությունները իր ժամանակին բեմական կյանք չունեցան: Այսուհանդերձ այսօր անհնար է հալոց շեքսպիրյան ընկալումների ամբողջական նկարագիրը տալ, առանց կարևորելու այն նշանակելի ավանդը, որ ներդրել է Ա. Կ. Տեղեկյանը հայ շեքսպիրագիտության պատմության մեջ²³:

Իր գրական-թարգմանչական գործունեությամբ աչքի է ընկնում նաև Տիգրան Հարություն Տեղեկյանը: 1853—1855 թթ. «Արփի Արարատյանի» հավելվածներում պարբերաբար տպագրվում են նաև Տ. Հ. Տեղեկյանի թարգմանությունները: Հայտնի է, որ «Հաղար ու մեկ գիշերների» հայերեն անդրանիկ թարգմանությունը, որ «Արփի» խափանման պատճառով անավարտ մնաց, նույնպես պատկանում է Տ. Հ. Տեղեկյանի գրչին. սակայն հայ-եվրոպական գրական առնչությունների զարգացման առումով առավել արժեքավորը Ֆրանսիացի մեծ կատակերգակ Մոլիերից կատարած նրա թարգմանություններն են: «Արփի Արարատյանի» էջերում մեկը մյուսի հետևից լույս են տեսնում Մոլիերի «Ագառ», «Ակամա բժիշկ» և «Սերը բժիշկ է» կատակերգությունները: Հետագայում, երբ Զմյուռնիայում հիմնադրվեց «Վասպուրական» թատրոնը և համայնքն ապրեց թատերական աշխույժ կյանքով, Տ. Հ. Տեղեկյանի թարգմանությունները ոչ միայն կրկին անգամ վերահրատարակվեցին, այլև մեծապես հարստացրին «Վասպուրական» թատրոնի մոլիերյան խաղացանկը: Դատելով այնօրյա պարբերական մամուլում հրատարակված տեղեկություններից, որոնք, ի դեպ, հաղորդել է Ա. Կ. Տեղեկյանը²⁴, «Վասպուրականի» միայն մեկ խաղաշրջանում (1863—1864 թթ.) Մոլիերից խաղացվել է հինգ կատակերգություն, այդ թվում նաև Տ. Հ. Տեղեկյանի թարգմանությունները: «Ո՛չ դրանից առաջ և ո՛չ էլ դրանից հետո հալ բեմում մի թատերաշրջանում Մոլիերից այդքան պիես չի ներկայացվել»²⁵:

Ժամանակի հայ գրական քննադատությունը աշխույժ հետաքրքրություն է ցուցաբերել Ֆրանսիացի մեծ կատակերգակի դեղարվեստական ժառանգու-

22 Տե՛ս Ա. Ս ո ղ ո մ ո Ն յ ա ն. Արտասահմանյան գրականություն. Երևան, 1979, էջ 62:

23 Ա. Կ. Տեղեկյանը թարգմանել և հրատարակել է նաև անգլիացի գրող Սամուել Զոսսոնի «Հուստիսա պատմությունը» վիպակը (1863):

24 Ա. Կ. Տ. Թատերական ներկայացմունք ի Զմյուռնիա. «Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 1863, №№ 701—705, 1864, №№ 726—732:

25 Գ. Ս տ ե լ յ ա ն յ ա ն. Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության. հ. 1, Երևան, 1962, էջ 276:

թյան նկատմամբ: Մոլիերի շուրջ ստեղծված հայ քննադատական գրականության մեջ որոշակիորեն դրսևորվել են հայ հասարակական-գրական հոսանքների տարամետ կարծիքներն ու տրամադրությունները: Օրինակ, Մխիթարյանները թեև կլասիցիզմի գրականության անխոնջ պրոպագանդիստներ էին, այդ տարիներին ոչինչ չհրապարակեցին Մոլիերից: Նրա անձին ու ստեղծագործությանը նվիրված որոշ տեղեկությունները²⁶ սքողված են ընդհանուր դրվատանքի քողով, որի հետևում դժվար չէ նկատել Մխիթարյան բանասերների ավանդական դժուշավորությունը:

1860-ական թթ. արևմտահայ հետադիմական շրջանների պարագլուխ Տևրոյենց-Չամուռնյանը Մոլիերին ևս դասում էր «անկրոն», «ամբարիշտ» հեղինակների շարքին, և ինչ-որ տեղ «Տարտյուֆին» ևս դատապարտում դժոխսին բանադրանքի²⁷: Հայ լիբերալ-բուրժուական քննադատությունը եթե իր ուրույն տեսակետն էր մշակել ֆրանսիացի մեծ կատակերգակի նկատմամբ, շաղկապատելով, թե առանց կյուդովիկոս XIV-ի արքայական հովանավորության Մոլիերը՝ Մոլիեր չէր դառնա²⁸:

Բնական է, որ այս և նման տեսակետները արժանի հակահարված էին ստանում հայ առաջադեմ գրաքննադատության, մասնավորապես զմլուռնահայ գրական շարժման ներկայացուցիչների կողմից: Գ. Զիլինկիրյանն, օրինակ, ազգային խաղաղանկի առաջնայնությունը շեշտելով հանդերձ, մեծ դեր էր հատկացնում օտար հեղինակների, այդ թվում նաև Մոլիերի «հրաշակերտներին», որոնք հոգևոր արժեքների «անհուն հանք մը ըլլալով», պիտի սատարեին հայ հասարակության բարոյական նկարագրի վերափոխման խնդիրներին²⁹:

Տևտեյան եղբայրները ևս խորապես ըմբռնում էին մոլիերյան երկերի հումանիստական, ժողովրդային տարերքը, նրանց ձաղկող սատիրայի մերկացնող ուժն ու նպատակայնությունը: Տ. Հ. Տևտեյանը նախորոշել էր հայացանել Մոլիերի բոլոր կատակերգությունները, ապալն վաղաժամ մահը (1868) խափանում է նրա ծրագրումները: Նրա գործը շարունակում է եղբայրը՝ Ա. Կ. Տևտեյանը: 1874-ին նա թարգմանում և լույս է ընծայում Մոլիերի գլուխգործոցը՝ «Տարտյուֆը» և այն ձոնում եղբոր հիշատակին³⁰:

«Տարտյուֆի» թարգմանությանը կցված է այդ կատակերգության ֆրանսերեն առաջին հրատարակության առթիվ Մոլիերի գրած հայտնի «Առաջադրանք»: Դրան հետևում են մեծ կատակերգակի երեք աղերսագրերը՝ ուղղված կյուդովիկոս XIV-ին՝ դարձյալ «Տարտյուֆի» կապակցությամբ: Այս նյութերն ուղագրով են այն առումով, որ այստեղ իրենց արտահայտությունն են գտել մեծ թատերադրի հումանիստական հայացքները, նրա տեսական ըմբռնումները թատրոնի և թատերական արվեստի վերաբերյալ և առհասարակ կատակերգության հասարակական, բարոյակրթական նշանակության մասին:

«Տարտյուֆի» առաջաբանում հանգամանորեն տրվում է այդ կատակերգության համար Մոլիերի դեմ հրահրված հալածանքների ճշմարիտ պատմությունը: Այդ հալածանքները սանձազերծել էին Փարիզի «Սուրբ ընծաներ միաբանություն» կոչված ճիզլիտական կաղմակերպության պարագլուխները: Լճկ անգամ չէ, որ Մոլիերը իր «Տարտյուֆի» և «Դոն Ժուանի» համար ենթարկվել է կատաղի բանադրանքի և կանգնել ինկվիզիտորական խարույկին հանձնվելու վտանգի առաջ: Մոլիերի խոստովանությունից երևում է, որ իր երկը հորինելիս նրա նպատակը եղել է ոչ թե առանձին մարդկանց և կամ հոգևոր դասի ուրեք ներկայացուցչի արատավոր կողմերի քննադատությունը, այլ

26 «Բազմավեսյ». Վենետիկ, 1861, № 5, 1867, №№ 10—11:

27 «Երեսակ». Կ. Պոլիս, 1862, № 130, էջ 304:

28 «Օրագիր Կ. Պոլսո». 1870, № 103:

29 «Մաղիկ». Զմլուռնիա, 1862, № 23, էջ 179:

30 «Թարթիֆ, կատակերգություն ի հինգ արարուածս, թարգմանութիւն Ա. Կ. Տէտէեան», Զմլուռնիա, տպագր. Նդբարց Տէտէեան, 1874:

Հասարակության մի ամբողջ խավի բարոյական անկման անխնա մերկացումն ու խարաղանումը:

Տեսեյան եղբայրների թարգմանած մոլիերյան կատակերգություններում Հասարակության մակաբուծական տարրերի ամեն տեսակ արատների ու մոլությունների ծաղրով հանդես են գալիս ժողովրդի ստորին շերտերի ներկայացուցիչները: Հեղինակի համակրանքը վայելող այդ պերսոնաժները օժտված են մարդկային լավագույն հատկանիշներով, ժողովրդական առողջ բանականությամբ, հյուսիսեղ կոլորիտով, բնական ու անկաշկանդ վարմացողությամբ: Ժամանակակիցները Մոլիերի կերտած վառ ու կենդանի կերպարներում տեսել են իրենց սեփական կրքերի ու թերությունների ճշմարիտ անդրադարձումը: Նրա յուրաքանչյուր կատակերգություն իր հետ բերում էր «արտոնյալներին» հանդեպ ատելության ու թշնամանքի ալիք: Եվ դա լավ էին հասկանում Մոլիերի հայ թարգմանիչները: «Տարտյուֆին» կցելով հավելյալ նյութեր, Ա. Կ. Տեսեյանը Մոլիերի խոսքի ու գործի տրամաբանությամբ հակադրում էր մեծ կատակերգակի նորօրյա հակառակորդներին:

Այստեղ հնարավորություն չունենք հստակաբանորեն անդրադառնալու «Տարտյուֆին» կցված գրական վավերագրերում արժարժված՝ մոլիերյան թատերական արվեստին վերաբերող բոլոր հարցերին, որոնք նույնպես սերտ աշխատանք են հայ լուսավորական ռեալիստական թատրոնի ու գրականության զարգացման խնդիրների հետ: Հայ գրաքննադատությունը բազմիցս նշել է մոլիերյան ավանդների առկայությունը հայ երգիծաբանության խոշորագույն ներկայացուցիչների՝ Պարոնյանի, Սունդուկյանի, Փուղինյանի, Օտյանի աչքի ընկնող երկերում:

Մոլիերից հետո Տիգրան Հարություն Տեսեյանի ուշադրությունը գրավել են համաշխարհային գրականության մեջ մեծ հռչակ վայելող Վ. Հյուգոն և Ալ. Դյումա-հայրը: Հյուգոյից նա թարգմանել է «Լուկրեցիա Բորջիա» (1863) հայտնի դրաման, իսկ Դյումայից՝ «Կատերին Զուլարդը» (1862): Իր կյանքի վերջին տարիներին Տ. Հ. Տեսեյանը թարգմանել և վեց շքեղ հատորներով հրատակակել է Ալ. Դյումայի «Կոմս Մոնտե-Քրիստո» հանրահայտ վեպը, որը նույնպես ուշագրավ երևույթ էր ժամանակի հայ գրական կյանքում³¹:

Այս ժամանակահատվածում է, որ թարգմանական երկերով հանդես է գալիս նաև Տեսեյան եղբայրներից կրտսերը՝ Հայկ Հակոբ Տեսեյանը: Նրա աշխատասիրությամբ լույս է տեսել «Ծաղրաբանությունը Նոսրեդդին Խոնդալի»³² ղվարձալի պատմությունների ժողովածուն, որը, մեր կարծիքով, հայ իրականության մեջ ևս լայն տարածում դրած արևելյան հոգևոր այդ արժեքների մի մասը ի մի բերելու և այն արևմտահայ գրական աշխարհաբարով հրատարակելու անդրանիկ փորձն էր: Հ. Հ. Տեսեյանի գրչին է պատկանում նաև «Հասկաբաղ աղջիկը»³³ փոքրիկ թատերախաղի փոխադրությունը, որն ունի պարզունակ սյուժե և շաղախված է նույնքան պարզունակ սենտիմենտալ բարոյախոսությամբ:

Հ. Հ. Տեսեյանի գրական վաստակի մեջ առավել արժեքավորը այն դրամաներն են, որոնք նրա թարգմանությամբ լույս են տեսել «Վասպուրական» թատրոնի շուրջ ստեղծված հայրենասիրական վերելքի տարիներին: Հետնվելով զմյուռնահայ գրական խմբակցության լուսավորական ծրագրումներին, Հ. Հ. Տեսեյանը ևս ներքաշվեց թատերական կյանքի ոլորտը և մեկը մյուսի

31 Ի դեպ, Տ. Հ. Տեսեյանը Դյումայի այս երկը հայացնելու անդրանիկ փորձը կատարել է 1852-ին, երբ նրա թարգմանությամբ, Կ. Պոլսում լույս տեսնող «Նույն աղավնիում» պարբերաբար տպագրվել է «Կոմս Մոնտե-Քրիստոյի» մի ղզալի մասը: Տ. Հ. Տեսեյանի գրչին է պատկանում նաև Քր. Շմիդի «Ժենեֆե» (1861) և մեղ անհայտ հեղինակի «Անգեղա Քաճիլի» (1854, 1862) բարոյախոսական վիպակների թարգմանությունը:

32 «Ծաղրաբանությունը Նոսրեդդին Խոնդալի, թարգմանեաց ի ղաղղիական է. Հ. Հ. Տ.». Բ տպագրություն, Զմիւռնիա, 1858:

33 «Հասկաբաղ աղջիկը», Տղայոց համար թատերական խաղ մը, թարգմանեաց ղաղղիական է Հայկ Տէտէեան. Բ տպագրություն, Զմիւռնիա, ի տպարանի Տէտէեան, 1863:

ետեից թարգմանեց ու հրատարակեց Վ. Հուգոյի «Անճելոն», էժեն Սյուրի «Դափառական հրեա» և «Գաղտնիք Փարիզի» գրամաները:

Եթե Շեքսպիրի և Մոլիերի երկերն այս կամ այն չափով նպաստում էին հայ գրականության մեջ և թատրոնում ռեալիզմի գեղագիտական սկզբունքների ձևավորմանը, ապա ֆրանսիական ռոմանտիկների վեպերն ու գրամաները ուղղակի թե անուղղակի սատարում էին հայկական ռոմանտիզմի գեղագիտական հիմքերի արմատավորմանը:

Տետեյան եղբայրների գրական-լուսավորական ծրագրումները առավել լայն ընդգրկումներով իրենց գործնական իրականացումը գտան զմյուռնահայ գրական շարժման մյուս ներկայացուցիչների՝ Զիլինկիրյանի, Մամուրյանի, Ոսկանյանի, Նուպարյանի, Մսերյանի և այլոց գրական-թարգմանչական գործունեության մեջ: Արփ. Արփիարյանը, անդրադառնալով զմյուռնահայ թարգմանչական դպրոցի գեղարվեստական ժառանգության նշանակությանը, նկատում է, որ զմյուռնահայ գրողները «նարագլուխ կառնոց», «անմոռացության սահմանված» որևէ ինքնուրույն երկ չափեցին. «Իզմիր տպագրված թարգմանություններն են, որ իրենց տեսակին մեջ նորություններ եղան և ազգեցին մտերու ընթացքին մոտ: Աստիճաբար ժողովրդին ընթերցանության ախորժակ բերին: Հետաքրքրություն արթնացրեց, երևակայություն գրգռող, հրապույր պարգևող գիրքեր, որոնք լավվեցան... Այդ գիրքերը հափշտակեցին ժողովրդին միտքը, հզոր ու տեական ազդեցություն մը ունեցան...»³⁴:

Երբ այս տեսանկյունից ենք մտնում զմյուռնահայ գրական խմբանցության, այդ թվում նաև Տետեյան եղբայրների թարգմանչական գործունեությանը, ապա անդնահատելի է նրանց ավանդը ազգային գրականության և թատրոնի եվրոպականացման ու ժողովրդայնացման գործում:

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ ЛИТЕРАТУРНОГО ДВИЖЕНИЯ АРМЯН СМЕРНЫ 50—60-х ГОДОВ XIX ВЕКА

(К 150-летию со дня рождения Арутюна Тетеяна)

К. А. ДЖИНГОЗЯН

(Резюме)

В истории армянской общественно-литературной жизни второй половины прошлого века особое место занимает литературное движение армян Смирны, включавшее таких просветителей-демократов, как Г. Чилингирян, М. Мамурян, Г. Костандян, А. Айкун, Г. Мсериан. К этому передовому содружеству литературных тружеников принадлежали и братья Арутюн, Карапет и Акоп Тетеяны. В истории армянской литературы они известны главным образом как неутомимые типографы-издатели, усилиями которых вышло в свет около 200 томов переводной литературы, в основном классических произведений западноевропейских авторов. Братья Тетеяны наряду с публицистической и издательской деятельностью развернули и весьма плодотворную переводческую деятельность, которая, однако, долгое время оставалась без должного внимания. Своими переводами из Шекспира, Мольера, Гюго, Дюма, Эжена Сю и других европейских писателей они содействовали обновлению и демократизации пропикнутой до этого классицистическим духом национальной литературы, оставив тем самым ощутимый след в истории новой армянской литературной и театральной мысли.

³⁴ Արփ. Արփիարյան. Պատմություն ժողովրդի թատրոնի հայոց գրականության. Գահիրե, 1943, էջ 18: